Ուրվագիր չորրորդ

Աստծու խոսքերը՝ աստվածային մատակարարումը՝ որպես կերակուր

Գրվածքների ընթերցում. Երմ 15:16, Երկ Օր 8:3, Մտթ 4:4, Հվի 5:39-40, 6:50-51, 57, 63, Կղս 3:16

I. «Քո խոսքերը գտնվեցին, և ես կերա դրանք»՝ Երմ 15:16ա.

Ա. Աստվածաշնչում սկզբում տեսնում ենք Աստծուն, իսկ հետո՝ Աստծու խոսելը՝ այն խոսքը, որ Նրա բերանից է դուրս գալիս՝ Ծնդ 1:1, 3, Մտթ 4:4:

Բ. Ողջ Գրվածքն աստվածաշունչ է, ուստի Գրվածքների խոսքերն Աստծու բերանով ելած խոսքերն են՝ Բ Տմթ 3:16:

Գ. Աստվածաշունչը՝ որպես Աստծու Խոսքը, Աստծու, Քրիստոսի, Հոգու և կյանքի մարմնավորումն է՝ Հվի 1:1, 4, 6:63, 14:6, 17, 20, 15:7, Ա Հվի 1:1, Հռմ 8:2:

Դ. Աստվածաշունչը՝ որպես Աստծու Խոսքը, բաղկացած է երեք տարրից՝ Քրիստոսից, Քրիստոսի մահից և Քրիստոսի հարությունից՝ Փլպ 1:20-21, 2:16, 3:10-11, 4:13:

Ե. Տեր Հիսուսի ասած խոսքերը հոգի են և կյանք՝ Հվի 6:63.

1. Տիրոջ ասած խոսքերը կյանքի Հոգու մարմնավորումն են՝ Հռմ 8:2:
2. Քրիստոսը հիմա հարության մեջ եղող կենդանարար Հոգին է, և Հոգին Նրա խոսքերում է մարմնավորված՝ Ա Կրթ 15:45բ, Բ Կրթ 3:17, Հվի 1:1, 4; 6:63:
3. Երբ ընդունում ենք Նրա խոսքերը՝ վարժելով մեր հոգին, ստանում ենք Հոգուն, ով կյանք է՝ 5:39-40:

Զ. Աստծու խոսքն աստվածային մատակարարումն է՝ որպես մեզ սնելու կերակուր՝ Երկ Օր 8:3, Մտթ 4:4.

1. Աստծու խոսքի վերաբերյալ աստվածային գաղափարն այն է, որ դա այն կերակուրն է, որով մենք սնվում ենք՝ Ա Կրթ 3:1-2ա, Եբր 5:12-14:
2. Աստծու խոսքն Աստված Ինքն է՝ որպես մեր կերակուրը՝ Հվի 1:1, 4, 14, 6:33, 51, 57:
3. Տեր Հիսուսը Գրվածքներում գրառված Աստծու խոսքն ընդունում էր որպես Իր հացն ու դրանով ապրում՝ Մտթ 4:4:
4. Ամեն խոսք, որ դուրս է գալիս Աստծու բերանով, մեզ սնելու համար հոգևոր կերակուր է. սա այն կերակուրն է, որով պետք է ապրենք՝ Հվի 6:51, 57:
5. Խոսքերի՝ որպես մեր կերակուրի միջոցով Աստված Իր հարստությունը բաշխում է մեր էության մեջ, որպեսզի մենք կազմվենք Իր տարրով:

Է. Սուրբ Աստվածաշնչի ամբողջ հայտնության համաձայն՝ Աստծու խոսքերը մեզ համար ուտելի են, և մենք պետք է ուտենք դրանք՝ Սղմ 119:103, Մտթ 4:4, Եբր 5:12-14, Ա Պտ 2:2-3.

1. Աստված ցանկանում է, որ մարդն ուտի, մարսի և յուրացնի Իրեն՝ Հվի 6:50-51, 57.

   ա. Ուտել նշանակում է մեզնից դուրս եղող բաների հետ շփվել ու դրանք

մեր մեջ ընդունել, որի արդյունքում դրանք ի վերջո դառնում են մեր կազմությունը՝ Ծնդ 2:16-17:

բ. Ուտել նշանակում է մեր մեջ կերակուր ընդունել, որպեսզի այն մեր մարմնում օրգանապես յուրացվի՝ Հվի 6:48, 50:

գ. Երբ մենք ուտում, մարսում և յուրացնում ենք Աստծու խոսքերը, դրանք իրականում դառնում են մենք. այսպես է խոսքը դառնում մեր կազմությունը՝ Մտթ 4:4, Կղս 3:16:

2. Ամեն անգամ Աստվածաշունչը կարդալիս պետք է կյանքի համար գանք Տիրոջ մոտ ու կյանքի հացն ուտենք, որ Քրիստոսն Ինքն է՝ Հվի 5:39-40, 6:48, 50-51, 57:

3. Տիրոջը՝ որպես խոսքի, ուտել նշանակում է Նրան մեր մեջ ընդունել որպես մեր կենսամատակարարման. Նա կյանքի հացն է, որը մենք կարող ենք ուտել՝ խխ. 48, 51:

4. Տիրոջն ուտել կարելի է Խոսքն աղոթքաընթերցելով. Աստծու Խոսքն աղոթքաընթերցել նշանակում է խոսքն ուտելու համար մեր հոգին վարժել՝ Եփս 6:17-18:

5. Որքան շատ ուտենք Աստծու խոսքերը, այնքան շատ կկազմվենք ու կհագենանք Քրիստոսով՝ Գղտ 4:19, Եփս 3:17, Կղս 3:4, 10-11:

6. Երբ ուտում ենք Տեր Հիսուսին, պետք է պատշաճ հոգևոր մարսողություն ունենանք՝ Եզկ 2:8–3:3, Երմ 15:16, Հյտ 10:9-10.

ա. Եթե լավ մարսողություն ունենանք, կերակրի համար լայն ճանապարհ կլինի, որպեսզի մտնի մեր ներքին էության ամեն մասը՝ Եփս 3:16-17ա:

բ. Անմարսությունը ցույց է տալիս, որ Քրիստոսը ոչ մի կերպ չի կարողանում մտնել մեր ներքին մասերը՝ Եբր 3:12-13, 15, 4:2:

գ. Անհրաժեշտ է մեր ողջ էությունը՝ մեր բոլոր ներքին մասերով, բաց պահել Տիրոջ համար, որպեսզի հոգևոր կերակուրը մեր ներսում լայն ճանապարհ ունենա. եթե այս բանն անենք, պատշաճ մարսողություն և յուրացում կունենանք, կներծծենք Քրիստոսին՝ որպես հոգևոր սնուցման, և Քրիստոսը կդառնա մեր կազմությունը՝ Կղս 3:4, 10-11:

7. Քանի որ մենք այն ենք, ինչ ուտում ենք, մենք կդառնանք Աստծու հետ մեկ և նույնիսկ Աստված՝ կյանքով և բնությամբ, բայց ոչ Աստվածությամբ՝ Հվի 1:1, 14, 6:32-33, 48, 51, 57:

II. «Քո խոսքն ինձ համար սրտիս ցնծությունը և ուրախությունը դարձավ»՝ Երմ 15:16բ.

Ա. Թեև Երեմիան մյուս բոլոր մարգարեներից ավելի շատ չարչարվեց, նա իր սրտում ցնծություն և ուրախություն էր ունենում, երբ էլ գտնում էր Աստծու խոսքերը և ուտում՝ խ. 16:

Բ. 16-րդ խոսքի «դարձավ» բառը ցույց է տալիս, որ ցնծությունը և ուրախությունն Աստծու խոսքերն ուտելու, մարսելու, յուրացնելու և մեր էության կազմությունը դարձնելու արդյունքն են, որի շնորհիվ Տիրոջ ուրախությունը դառնում է մեր ուրախությունը՝ Հվի 15:7, 10-11.

1. Երբ ուտում ենք Աստծու խոսքերը, Նրա խոսքը դառնում է մեր սրտի ցնծությունը և ուրախությունը՝ Երմ 15:16:

2. Երբ Աստծու խոսքերը մեր մեջ ենք ընդունում և մեր ներքին մասերում յուրացնում, այս խոսքերը դառնում են ներքին ուրախություն և արտաքին ցնծություն:

Գ. Աստված ուրախության Աստված է, և Նա ուզում է, որ վայելենք Իրեն՝ Նեմ 8:10, Սղմ 36:8.

1. Աստծու Խոսքում բացահայտված է մի քաղցր միտք այն մասին, որ Քրիստոսի մեջ Աստված Իրեն մեզ է տվել որպես շնորհք, որպեսզի լինի մեր վայելքը՝ Հվի 1:14, 16-17, Բ Կրթ 13:14:
2. Աստվածաշնչում Աստծու և մարդու փոխհարաբերության առաջին հիշատակման ժամանակ Աստված Իրեն ներկայացրեց մարդուն որպես կերակուր. սա ցույց է տալիս, որ Աստծու ցանկությունն Իրեն մեր վայելքը լինելու համար մեզ տալն է՝ Ծնդ 2:7, 9, Սղմ 16:11, Երմ 15:16:

Դ. Հռմ 14:17-ը խոսում է «Սուրբ Հոգու մեջ ուրախության» մասին.

1. Այս խոսքը ցույց է տալիս, որ Հոգին կապված է ուրախության հետ. ուրախությունը Հոգու հատկանիշներից է՝ հմմտ. Ա Թսղ 1:6:
2. Ուրախությունը նաև Հոգու պտուղներից է. ներբնակվող Հոգին հավատացյալների համար ուրախություն է՝ Գղտ 5:22:
3. Երբ Հոգու մեջ ենք լինում, մենք ուրախ ենք լինում, այնքան ուրախ, որ գուցե երգենք և փառաբանություններ աղաղակենք Տիրոջը՝ հմմտ Գրծ 16:25:
4. Մենք գուցե ցնծանք «անպատմելի և փառքով լեցուն ուրախությամբ»՝ Ա Պտ 1:8.
   ա. Փառքով լեցուն ուրախությունն այն ուրախությունն է, որը ընկղմված է Տիրոջ մեջ որպես փառք. ուստի սա մի ուրախություն է, որը լի է Աստծու արտահայտությամբ՝ Գրծ 7:2, 55, Ա Պտ 5:10, Բ Պտ 1:3:
   բ. Մենք ցնծում ենք մի ուրախությամբ, որ թաթախված է փառքով՝ Ա Պտ 1:8:

III. «Թող Քրիստոսի խոսքը բնակվի ձեր մեջ հարուստ կերպով»՝ Կղս 3:16.

Ա. Քրիստոսի խոսքը Քրիստոսի ասած խոսքն է՝ Հվի 6:63.

1. Աստված Իր նորկտակարանյան տնտեսությունում Որդու մեջ է խոսում՝ Եբր 1:1-2:
2. Որդին ոչ միայն Ինքն է խոսում Ավետարաններում, այլև Իր անդամների՝ առաքյալների ու մարգարեների միջոցով խոսում է Գործքում, Թղթերում և Հայտնությունում. այս ողջ խոսելը կարող է Նրա խոսքը համարվել:
3. Քրիստոսի խոսքը ներառում է ամբողջ Նոր Կտակարանը, ու մենք պետք է լցվենք այս խոսքով՝ Կղս 3:16:

Բ. Քրիստոսի խոսքն իրականում Քրիստոսի անձն է՝ խ. 16, Հվի 15:4, 7.

1. Պողոսը գրեթե անձնավորում է Քրիստոսի խոսքը. նա ասում է, որ թող այս խոսքը բնակվի մեր մեջ, կարծես այն կենդանի անձ լինի՝ Կղս 3:16, հմմտ Եփս 3:17:
2. Նախ՝ մենք ունենք Քրիստոսին՝ որպես մեր կյանքի. հետո՝ ունենք Նրա կենդանի խոսքը, որ անձնավորված է որպես մեր մեջ բնակվող Նրա անձը՝ Կղս 3:4, 16:

3. Քանի որ Քրիստոսի խոսքը կարող է բնակվել մեր մեջ, այն պետք է կենդանի անձ լինի. հետևաբար, եթե թույլ ենք տալիս, որ Քրիստոսի խոսքը բնակվի մեր մեջ, ապա դա ցույց է տալիս, որ թույլ ենք տալիս կենդանի անձին՝ հենց Քրիստոսին, բնակվել մեր մեջ՝ խ. 16, 1:27:

Գ. Անհրաժեշտ է թույլ տալ, որ Քրիստոսի խոսքը հարուստ կերպով բնակվի մեր մեջ և մեր էության մեջ առաջին տեղն ունենա՝ 3:16.

1. «Թող» բառը կարևոր է. Քրիստոսի խոսքն արդեն ներկա է, բայց անհրաժեշտ է թույլ տալ, որ այն գործի մեր ներսում:
2. Այն, որ Քրիստոսի խոսքը հարուստ կերպով բնակվում է մեր մեջ, նշանակում է, որ այն հարուստ կերպով ներապրում, ներբնակվում է մեր մեջ՝ խ. 16:
3. «Բնակվել» թարգմանված հունարեն բառը բառացի նշանակում է «լինել տանը», «ներբնակվել», «ներապրել».
   ա. Սա ցույց է տալիս, որ մենք պետք է թույլ տանք, որ Քրիստոսի խոսքը բնակվի մեր մեջ, ներապրի մեր մեջ, իր տունը հաստատի մեր մեջ՝ խ. 16:
   բ. Տիրոջ խոսքը պետք է մեր ներսում հարկ եղած չափով տեղ ունենա, որպեսզի գործի և Քրիստոսի հարստությունը սպասավորի մեր մեջ՝ Եփս 3:8:
4. Քրիստոսի խոսքին պետք է մեր ներսում գործելու, ներապրելու և իր տունը մեր մեջ հաստատելու ազատություն տանք՝ Կոլս 3:16:

Դ. Անհրաժեշտ է թույլ տալ, որ Քրիստոսի խոսքը բնակվի մեր մեջ, որպեսզի փորձառաբար ապրենք մեր ներսում Աստծու խոսքի գործառույթների գործելը, մեր էության մեջ Քրիստոսի հարստությունը սպասավորելը՝ Եփս 3:8.

1. Աստծու խոսքը մեզ լուսավորում է (Սղմ 119:105, 130), սնուցում (Մտթ 4:4, Ա Տմթ 4:6) և ջրում, որպեսզի մեր ծարավը հագեցնի (Եսայ 55:8-11):
2. Աստծու խոսքը մեզ ամրապնդում է (Ա Հվի 2:14, Առկ 4:20-22), լվանում (Եփս 5:26) և կառուցում (Գրծ 20:32):
3. Աստծու խոսքը մեզ դարձնում է ավարտուն, կատարյալ (Բ Տմթ 3:15-17) և խրատում է՝ մեզ սրբացնելով (Հվի 17:17):
4. Թույլ տալով, որ Քրիստոսի խոսքը ներապրի մեր մեջ, մենք կարողանում ենք Քրիստոսով՝ որպես Աստծու հատկանիշների իրականությամբ, լցված Աստվածամարդ դառնալ՝ Կոլս 3:16-21, Փլպ 4:5-8:

© 2020 Living Stream Ministry